


338.1

pu - 11



2 802-10



ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ԿԱՄՊԱՆԻԱ

ԽՍՀՄ

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՄԲԱԿԻ ԲՆԱԳԱՎԱԹՈՒՄ

1. ՀՈԴՎԱԾ «ՊՐԱՎԴԱՅԻՑ»
2. Համ Կ (բ) Կ ԿԿ ՎՈՐՈՇՈՒՄԸ
3. Համ Կ (բ) Կ ԱՅԿԻԿ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՊԵՏՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ

1-9-3-1

338.1
Խ-11

11 SEP 2013

29813

338.1

Խ-11 րս

ՊԵՏՏՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏ. 1529
ԳՐԱՌԵՊ. 6209 (Բ-)
ՊԱՏ. 958
ՏԻՐԱԺ 8000



Независимость СССР в области хлопка

682

38

ՊԵՏՔ Ե ԱՊԱՀՈՎՎԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԲԱՄՐԱԿԻ ՃԱԿԱՏՈՒՄ

Հնգամյակի յերրորդ տարում բաղլեիկական հար-
ձակման ծրագիրը խնդիր և գնում հաղթանակ տանել
սոցիալիստական շինարարության բոլոր մասերում:

Սոցիալիզմի կառուցման հաջողության հիմնական
պայմանի՝ ծանր ինդուստրիայի անընդհատ շարունակ-
վող անշեղ աճման առկայությամբ, հնգամյակի
յերրորդ տարում մեր առաջ ծառանում և նույնպես
արդյունաբերության այն ճյուղերի արտադրանքի
գլխի տնտես ապահովելու խնդիրը, վորոնք լայն
գործածության առարկաներ են արտադրում: Այդ ա-
նումը հնարավոր դարձավ շնորհիվ կուսակցության
հետեւողականորեն վարած կուրսի յերկրի ինդուստ-
րացման և կոլեկտիվացման խնդրում, վորը թույլ և
տալիս հաղարավոր տրակտորներ շարժելու դեպի գյու-
ղը լքնդարձակելու բոլոր կուլտուրաների, վորոնց թը-
վում նաև տեխնիկականների, ցանքերի տարածություն-
ներ, խորհրդատեսությունների և կոլտնտեսությունների
ծավալուն շինարարության բազայի վրա:

Այս կապակցությամբ ԽՍՀՄ ԿԳԿ 3-րդ սեսիան
վորոշել և 1931 թվականին 29 սոկոտով բարձրացնել
անդուստ արտադրանքի աճումն ինդուստրիայի այն
ճյուղերի, վորոնք լայն գործածության առարկաներ են

70

աբտադրում: Հաստատելով ԽՍՀՄ արդյունաբերության բոլոր ճյուղերին վերաբերող արտադրական առաջադրությունները, սեփան՝ ի թիվս մյուս առաջադրությունների, հաստատել և նաև բամբակի վերամշակմանը վերաբերող առաջադրությունը, խնդիր դնելով ընթացիկ տարում 410 հազար տոնն բամբակ վերամշակել:

Այն տեղաշարժերը, վորոնք տեղի ունեցան Խորհրդային Միության արդյունաբերության հումքի, մասնավորապես բամբակի հումքի բազայի մեջ, արդյունքն են կուսակցության և բանվոր դասակարգի այն հսկայական նվաճումների, վոր ձեռք բերվեցին համատարած կոլեկտիվացման և նրա բազայի վրա կուլակության՝ վորպես դասակարգի, վերացման գործում, խորհանտեսությունների և ՄՏԿ ծավալման, նոր շրջանների տեխնիկական կուլտուրաների ցանքերին հաղորդակից դարձնելու գործում:

Անցած տարում Խորհրդային Միության բամբակացան դաշտերում 5 հազար տրակտոր եր բանում: Ընդարձակ չափերով դյուրատնտեսական բարելավված ինվենտար եր կիրարկվում: Ուժեղին կերպով ընդարձակվեցին կոլտնտեսությունների ընդգրկած բամբակացան դաշտերը: Այսպես, Միջին Ասիայում-ԽՍՀՄ հիմնական մամբակացան շրջանում-կոլտնտեսություններն ընդգրկել են բամբակացանի համար կոտորակատացի յենթարկված ցանքադաշտերի 38,2 տոկոսը 1929 թվականի 5 տոկոսի փոխարեն: Ցանքարար կոլտնտեսությունների բամբակացան հողաշերտը նույնպես խիստ աճեց: Խորհանտեսությունները գրեթե յեռապատկեցին բամբակի ցանքերը:

Բայլևեկյան այդ ծավալուն հարձակման հետևանքով բամբակի արտերի տարածությունը 1930 թ. 48,7 տոկոսով ավելացավ 1929 թ. ցանքերի տարածությունից: 1930 թ. բամբակացանների աճումը, վոր 500 հազար հեկտ. հասավ, 60 հազար հեկտ. ավելացրեց նախորդ չորս տարիների (1925-29) աճումների գումարը: Միջկատերագմյան բամբակացան տարածությունը շատ հետ և թողնված: Այս բանում մի առավամ ևս յերեվում են սոցիալիստական ինդուստրիայի հաջողությունները, ինդուստրիալ յինարարության ծավալման տեմպերը: Գործով ապացուցված են կուսակցության լողունգի կենսունակությունը և կարելիությունը Խորհրդային Միության բամբակի տեղախուժյան համար մղվող պայքարի մասին:

Այդ պայքարի պատասխանատու մասերից մեկը բամբակամթերման կամպանիան և հանդիսանում: Բամբակամթերումները պետք և իրացնեն բամբակի առատ բերքը, առաջ շարժեն այն դեպի վերամշակող ձեռնարկությունները, հորր ֆակտորի դեր խաղան բամբակացան շրջանների սոցիալիստական վերակառուցման համար:

Պայքարի այդ մասի վրա յեն այժմ կենտրոնացած բամբակացան շրջանների կուսակցական կազմակերպությունների ուժերը: Չնայելով վոր 1929 թ. մթերումների թվերն արդեն գերազանցվել են (ըստ բամբարձակ ցուցանիշների), այնուամենայնիվ ույո տարվա մթերումների պլանի կատարումից դուր հեռու յենք: Բամբակի աճած ցանքադաշտերը, անդուտ արտադրանքի աճումը, արդյունաբերության մեծացած պահանջը և նրա հետագա ընդարձակման խնդիրները—ահա թե

ինչն և վորոշում մթերումների չափն այս տարի՝ է տարբերություն նախորդ տարվա:

Գլխամբաղկումի 1931 թվականի հունվարի 11-ի տվյալներով՝ բամբակամթերումների համաձուլթե- նական պլանը կատարված է ընդամենը 61, 2 տոկոսով (կոնտրակտացած): Բամբակացան հիմնական շրջանը — Միջին Ասիան — կատարել է պլանը 65, 4 տոկոսով (խորհրդատեսությունների հետ միասին), Անդրկովկա- սը — 41, 7 տոկոսով, նոր բամբակացան շրջանները — 12, 8 տոկոսով:

«1931 թվականի սկզբներին բամբակի մթերումնե- րը արդեն գերազանցել են նախորդ ամբողջ տարվա մը- թերումներին: Չնայելով այս հանգամանքին, այ- նուամենայնիվ անհրաժեշտ է հետադաշտում ունենա- մառ պայքար մղել բամբակի մթերումների պլանի կա- տարման համար»: (Մոլոտով, զեկուցում ԽՍՀՄ ԿԳԿ 3-րդ սեսիայում՝ նստաշրջանում):

Այսպիսով, իր ամբողջ հասանելի մեկ ծառանում է բամբակի համար մղվող պայքարում հաղթանակ տանելու, բամբակամթերումների պլանը կատարելու խնդիրը:

Այս նշանակում է, թե պետք է՝ առաջին հերթին, վճռական հարձակում ծավալել կուլակա-բեյական տարրերի վրա, ուժեղացնել մասսայական աշխատանքը և ուժեղացնել կուլակցական կազմակերպությունների ղեկավարությունը, բամբակամթերումների կամպա- նիայի վրա:

Միջին Ասիայի, Անդրկովկասի մի շարք շրջաննե- րում կուլակցական կազմակերպություններն իսկական բեկումն ապահովել են բամբակամթերման ընթացքում:

Այդ բանի արդյունքն է հանդիսանում մթերող կազմա- կերպությունների պարզ աշխատանքն այդ շրջաննե- րում, հաստատուն առաջադրությունների կատարումը կուլակային տնտեսությունների կողմից, մթերումնե- րի տեմպերի ընդհանուր աճումը, հանդիպական պլան- ների առաջնաշտումը սկզբնականների կատարման հի- ման վրա:

Անհրաժեշտ է այդպիսի բեկումն առաջ բերել բոլոր շրջաններում, բամբակամթերմանը վերաբերող աշ- խատանքի լավագույն տիպարները մասսաների սեփա- կանությունը դարձնելով: Այն հանգամանքը, վոր մի շարք շրջաններ հաջողությամբ են կատարել, նույնիսկ գերազանցել են բամբակի մթերումների պլանը, վկա- յում է, վոր կամպանիայի հաջողությամբ վնդված է տեղական կազմակերպությունների՝ և առաջին հերթին կուլակցականների բայլընկերական աշխատանքով:

Առաջնակարգ շրջանների, կուլտնտեսությունների, Ղլադների փորձը պետք է տարածել ամենուրեք: Այս հասպակցությամբ՝ շատ կարևոր նշանակություն է ստանում բրիգադների առաջումը առաջնակարգ շրջան- ներից դեպի հետ ընկածները: Լավագույն կուլտնտեսու- թյունների ներկայացուցիչներին այդ բրիգադների մեջ տանելը ծառայություն կմատուցի բամբակադրմական շրջանների հետագա կուլեկտիվացման խնդիրներին, կը- նապաստի բամբակամթերման հաջողությամբ: Մասսա- յական աշխատանքի այդ ձևն անհրաժեշտ է լայնորեն զործադրել, կազմակերպելով այն վայրերում, վորտեղ դեռ չի կիրարկվում: Սրան զուգընթաց՝ անհրաժեշտ է ուժեղացնել կուլտնտեսականների, չբավորների և մի- ջակների մասսաների համախմբումը, ամեն կերպ պար-

դասցենք մի աստիճանական մրցումը, առանձին չըջան-
ների, կոլտնտեսութիւնների, զշաղկների մրցականչը
և այլն:

Բամբակ կա: Միայն աջ ոպորտունիստները կարող
են ժխտել այդ, ջանալով ալիքալիս պնդումներով ար-
դարացնել իրենց անկարողութիւնը և չկամութիւնը՝
ծափալիւս հարձակումը բեյի և կուլակի վրա, մասա-
ներին կազմակերպելու և գլխավորելու: Աջ ոպորտու-
նիստական պրակտիկայի հաղթահարումը բամբակա-
մթերման մեջ՝ կամպանիայի հաջադուրքյան հիմնա-
կան պայմանն է հանդիսանում:

Վճռապես պետք է դուրս բերել մթերողների և այլ
կազմակերպութիւնների աշխատանքից պլանի կատար-
ման խնդրի շուրջը յերեմացող ոպորտունիստական վե-
րաբերմունքը: Անհրաժեշտ է ուժեղացնել պայքարը
մասսայական աշխատանքի թերադնահատութեան դեմ,
կուլակութեանը ամեն կերպ մեղմութիւններ ցույց տա-
լու դեմ, վարանդ տեղի յեն ունենում բամբակամթեր-
ման մեջ: Միաժամանակ պետք է հակահարված տալ
վարչականութեան այն փորձերին մթերման աշխատան-
քում, վորոնք միջակին են դիպչում:

Բամբակամթերման կամպանիան ընթանում է դա-
սակարգային սրված պայքարի պայմաններում: Համա-
տարած կոլեկտիվացման հաղթական զարգացումն ա-
րագացնում է կապիտալիստական դասակարգի վեր-
ջին ջոկատի—կուլակութեան տապալումը: Կուլակա-
բեյական տարրերը փորձում են արգելք հանդիսանալ
սօցիալիզմի հարձակմանը, դրա համար ոգտադործելով
պայքարի բոլոր տեսակներն ու ձեւերը: Բամբակա-
մթերման կամպանիայում կուլակն ու բեյը ջանք են

Թափում նենգադուլի յենթարկել բամբակի հանձնադր
վերաբերող հաստատուն տառջադրութիւնների հա-
տարումը, փորձում են թուլացնել կամպանիայի ըն-
թացքը: Այդ բոլոր փորձերին պետք է ամենադաժան
հարվածը հասցնել:

Պետք է բարձրացնել գյուղական և զշաղկների խոր-
հուրդների դերը բամբակի իրացման և մթերման գոր-
ծում: Գյուղխորհուրդը պետք է այս կամպանիայի
կազմակերպիչը դառնա իր շրջանում: Բամբակացան
չըջանների հարյուրավոր լավագույն կոլտնտեսու-
թիւնները կատարել և գերակատարել են բամբակի ի-
րացման և մթերումների պլանները: Բոլոր կուլտե-
տնտեսութիւնները պետք է հավասարվեն լավագույն կու-
տնտեսութիւններին: Առաջին ռապորտը մթերումների
ավարտման մասին կուսակցութիւնն սպասում է բամ-
բակացան չըջանների կոլտնտեսութիւններից: Կու-
տնտեսութիւններն ու խորհտնտեսութիւնները պետք
է ուժեղացնեն իրենց աշխատանքը բամբակի մթերում-
ների մեջ, լավագույն որինակներ ցույց տան, ոգնեն
անհատական օեկտորում տարվելիք մասսայական աշ-
խատանքին:

Այս կապակցութեամբ, նաև ի նկատի ունենալով
դարնանացանի կամպանիայի մոտիկութիւնը, իր ամ-
բողջ հասակովը մեկ ծառանում է կոլտնտեսութիւն-
ների ներսնտեսական ամրացման խնդիրը և՛ առաջին
հերքին, աշխատանքի կազմակերպման և մեքենացման
խնդիրները:

Բամբակամթերման կամպանիայի ներկա ետապը
զուգադիպում է դարնանացանի ամփոջական նոթո-

պատրաստութեան շրջանին: Այդ հանգամանքը պարտաւորեցնում է տեղական կազմակերպութեաններին ամենալարված աշխատանքը տանել միջերումների պլանը ամենաարագ կերպով կատարելու, համար միաժամանակ ծավալելով դարնանացանի կամպանիայի նախապատրաստութիւնը:

Կի ԼԿԳԿ վերջին միասնական պլանումի դրած խնդիրը՝ «բամբակացան և ճակնդեղացան շրջաններում ապահովել տնտեսութիւնների ընդհանուր թվի վրէպակաս քան 50 տոկոսի ընդգրկումը կոլեկտիվ տնտեսութիւնների կողմից» պարտաւորեցնում է բամբակացան շրջանների կուսակցական և մյուս կազմակերպութիւններին ընդունել այդ աշխատանքը վորպես ամենակարեւոր աշխատանքներից մեկը, առանց խղելու այն տարվող ընթացիկ կամպանիաներից: Բամբակամիջերման մասսայական աշխատանքը, դարնանացանի կամպանիայի նախապատրաստութիւնը պետք է ամենասերտ կերպով կապված լինեն կոլեկտիվացման խնդիրների հետ: Կոլեկտիվացումը խղել տնտեսական-քաղաքական կարևորագույն կամպանիաներից՝ նշանակում է «հերթականութեան» ոպորտունիստական դիրքի վրա կանգնել:

1931 թվականի ցանքի կամպանիան խոշորագույն հեռանկարներ է բաց անում բամբակադործութեան սոցիալատական վերակառուցման դործում: 1931 թ. բամբակի ցանքադաշտերը պետք է 50 տոկոսով ընդարձակվեն նախընթաց տարվա բամբակացանների համեմատութեամբ և կազմեն 2,3 միլիոն հեկտ: Հանրացված

տեկտուրը ընդգրկելու, յի բամբակի ցանքերի ընդհանուր տարածութեան մոտավորապես 58 տոկոսը: Խիստ աճելու յին բամբակի ցանքերի տարածութեանները նոր շրջաններում—բամբակի ցանքերի համար ծրագրված է 450 հազար գա: Գարնանը բամբակացան դաշտերում աշխատելու յին 144 ՄՏԿ, վորոնք ընդգրկելու յին բամբակի ցանքերի մոտ 1,5 միլիոն գա տարածութիւն: Տեղական կազմակերպութիւնները հենց այժմյանից պետք է իրենց ուշադրութեամբն ապահովեն ՄՏԿ չնարարութիւնն այն հաշվով, վորպեսզի նրանք կարողանան միաժամանակ սկսել իրենց աշխատանքը և անընդհատ տանել այն:

Մեքենավար ցանքը (տրակտորով և ձիաքարշով) կատարվելու յի Միջին Ասիայում գյուղացիական հողերի 70 տոկոսի վրա, Սնդրկովկասում—85 տոկոսի, իսկ նոր շրջաններում—100 տոկոսի:

Բամբակացան դաշտերի վրա տարվելիք աշխատանքի այդպիսի թափը պետք է ապահովի բամբակի բերքաւորքյան անումը:

1931 թվականի կոնտրոլ թվերը ինդիկ են դնում հում—բամբակի բերքաւորութիւնը բարձրացնել 10,6 ցենտներով ամեն մի հեկտարից, ստացվելիք թեւը 6,67 ցենտներով: Այս ցուցանիշների համար պետք է բայլչեկիդեն կովել, դարնանացանի կամպանիայի նախապատրաստութեան պրոցեսում ապահովելով նրանց կատարումը վերահաս արտադրակ. սեզոնի ընթացքում:

Պետք է հենց այժմյանից գործնականորեն դնել բերքահավաքի կամպանիայի, աշխատանքի կազմակերպման, խորհտնտեսութիւններին բանվորական ու-

ժողով ապահովելու խնդիրները: Պետապետին պահանջ է
 դրվում քաղաքի արտադրության պրոցեսների մե-
 քենայացման պրոբլեմը, վորպես ամենատեղի միջոց
 աշխատանքի տեղեկներն արագացնելու, նրա արտադրո-
 ղականությունը բարձրացնելու համար: Պետք է հաս-
 տատապես հաշվի առնել, վոր բամբակին վերաբերող
 աշխատանքների ժամանակին և ճիշտ կազմակերպումով
 մենք դուրս կբերենք թերությունները բերքահավաքի
 և մթերման կամպանիաների միջոց: Այս բոլոր մո-
 թեոսները պետք է հաշվի առնվեն հենց այժմ, պետք է
 ամենալարված աշխատանք ծախվովի՝ բամբակի ծրա-
 դրի կատարումն ապահովելու համար:

Արդյունաբերությունը հումք է սպասում: Հումք
 կա, պետք է հավաքել այն և հասցնել: Բամբակի մթե-
 րումների պլանի կատարման, գարնանացանի նախա-
 պատրաստության կոմպանիայի, դեպի կոլտնտեսու-
 թյունները նոր, հզոր հոսանք կազմակերպելու վրա
 պետք է բեվեռովի բամբակացան շրջանների կուսակցա-
 կան և խորհրդային կազմակերպությունների ուշա-
 դրությունը:

1931 թվականի բամբակի արտադրական ծրագրի
 իրագործումը, անցումը համատարած կոլեկտիվացման
 և նրա հիման վրա կուլակության վերացումը, կոլտնտե-
 սականների, չքավորների և միջակների մասսաների հա-
 մախմբումը բամբակամթերման պլանի կատարման հա-
 մար մղվող պայքարում, անդուլ հարձակումը կուլակի
 վրա, վճռական պայքարը յերկու ճակատով—կարե-
 վորագույն պայմաններն են արագագույն կերպով իրա-
 դրվելու կուսակցության լուղուցը Խորհրդային Միու-
 թյան բամբակի անկախության մասին:

(«Պրավդա» 18-ին հունվարի 1931 թ.)

ՊԼԵՐԱՄԱԿԱՆՈՍԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍԱՍԻՆ ՀԱՍԿ (Բ) Կ ԿԿ 1929 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

1. Համկ(բ)Կ ԿԿ նշում է, վոր չնայելով վերա-
 կանդնման շրջանի սկզբում գոյություն ունեցող բամբա-
 կագործության չափազանց ցածր մակարդակին, չնոր-
 հիվ կուսակցության և խորհրդային որդանների ուշադ-
 րության և աջակցության և տնտեսական որդանների յե-
 ոանդուն աշխատանքի, բամբակագործների լայն մաս-
 սաների ակտիվ մասնակցությամբ հաջողվեց բամբա-
 կագործության մինչպատերազմյան մակարդակը վի-
 րականացնել, դիտվին կոոպերացման յենթարկել բոլոր
 բամբակագործներին և կոնտրակտացիայի մեջ առնել
 բամբակի բոլոր ցանքերը: Այս հանգամանքը՝ իր հեր-
 թին, զգալի չափով բարձրացրեց չքավոր-միջակային
 բամբակագործների լայն մասսաների տնտեսական և
 կուլտուրական մակարդակը:

2. Մասնավորապես ԿԿ վորպես անտարակույս
 նվաճումներ է նշում. ա) վոռոգման սիստեմների վորոշ
 բարելավումը. բ) բարելավված տեսակավոր սերմացու
 ների Ֆոնդի ստեղծումը և գյուղացիական ցանքերի
 նշանակալից մասի ապահովումն այդ սերմացուներով.
 գ) գյուղացիական տնտեսությունների հոծ բազմու-
 թյան մեջ հանքային պարարտացումներ, տրակտորներ,
 յեմբրուպական գյուղատնտեսական ինվենտար մտցնելը.
 դ) անտարակույս հաջողությունները բամբակագործման
 արտադրության տեխնիկական վերակառուցման և ուս-
 ցիոնալացման դործում. ե) բամբակագործների լրա-
 կատար ընդգրկումը կոոպերացիայի մեջ և բամբակի
 բոլոր ցանքերի կոնտրակտացումը:

3. Բամբակագործության զարգացման այս դրական կողմերին զուգընթաց՝ Համկ(բ)Կ ԿԿ ընդունում է, թե բամբակի ցանցերի ջրարբի տարածությունների աճումը և թե տարածությունների տեսակարար կշիռը վոռոգված հողերի վրա, ինչպես և բամբակագործության զարգացումը Միության նոր և հեռավոր շրջաններում (ԱՍՖԽՀ, Կազակստան, Տաճիկստան և այլն) պարզապես անբավարար են։ ԿԿ ընդունում է նմանապես, վոր բամբակագործության հանրայնացված սեկտորի աճումը թույլ է և բամբակի բերքատվությունը՝ ցածր։

4. Համկ(բ)ԿԿԿ նշում է բամբակագործության զարգացման բացառիկ կարեւոր նշանակությունը ԽՍՀՄ ինդուստրացման և անկվածային արդյունաբերությունը հումքի բազա ստեղծելու գործի համար։

Ընթացիկ հնգամյակում բամբակագործության զարգացումը Միության մեջ պետք է ընթանա մեր բոլոր հնարավորությունների առավելագույն ուժեղացման գծով բամբակացանի տարածությունն ընդարձակելու և բամբակի բերքատվությունը բարձրացնելու համար այն հաշվով, վոր հնգամյակի վերջերքին վոչ միայն ազատենք Միության անկվածային արդյունաբերությունը արտասահմանից ներմուծվող բամբակից, այլև անհրաժեշտ սեղերվն ունենանք անկվածային արդյունաբերության հետագա ընդարձակման համար։

Մինչդեռ այդ կարեւորագույն խնդիրը չի լուծվում բամբակագործության զարգացման համար կազմված հնգամյա պլանով, վորը հաշվի չառնելով բամբակագործության ծավալման բոլոր հնարավորությունները, շատ պակասեցրած է հանդիսանում և յենթակա յե մեծացման նշանակալից չափով։

Այդ իսկ նպատակով Համկ(բ)Կ ԿԿ անհրաժեշտ է համարում բամբակագործության զարգացման հնգամյա պլանը վերանայման յենթաբիւլ, իրրև առաջադրությունն ընդունելով 1932 թվականի բերքից նախատեսված 590,4 հազար տոնն բամբակաթելի փոխարեն ոտանալ 787,2 հազար տոնն բամբակաթել։

5. Դրանից յեղնելով՝ ԿԿ առաջարկում է. ա) վերանայել ջրատեսության աշխատանքների պլանը ուշադրություն և միջոցները տարածություններն ընդարձակելու և հայթայթվելիք բամբակի քանակն աւելացնելու ուղղությամբ կենտրոնացնելով շինարարութ. աւելելի եֆֆեկտավոր հողամասերի վրա, ամեն կերպ ուժեղացնելով նրա ծավալումը և ավարտումը. բ) ամենակարճ ժամկետում վերականգնել խոշոր կապիտալ ներդրումներ չպահանջող տեղական վոռոգման բարուքանդ յեղած սիստեմները և դրանով ել շրջանառության մեջ դնել ներկայումս խոպանացած հողերը. գ) բարձրացնել աշխատող սիստեմների ոգտակար գործողությունը ջրոգտագործման ուղիներաւացման ուղիով. դ) ընդարձակել մեքենայացված վոռոգման կառուցման աշխատանքներն այն հողերի վրա, վորոնք ինքնահոս վոռոգման չեն յենթարկվում և անմիջապես ձեռուալիով. զ) ընդարձակել մեքենայացված վոռոգման կատակահարմարության խնդիրը. ե) ամենակարճ ժամկետում ավարտել Վախչեյի, Չերչիկ Անդրեյի շինարարության խնդրի ջննությունը, ինչպես և Սորեյմայի, Կալկադարի վոռոգման սիստեմների վերաշինության խնդիրը և Անդրկովկասի տեղական սիստեմների, ինչպես և Անդրկովկասի Միլսկիի և Մուղանի տափաստանների վոռոգման խնդիրները։ Առանձնապես ջննության առնել Գուրդեոյ Ստեպի նոր վոռոգման շինարարության նպատակահարմարության խնդիրը։

6. Վոտողման մանր, ալեկի հաջող և եժան շինարարություն կատարելու շահագրգռություն՝ անհրաժեշտ է աշխատի շինարարության աշխատանքներին դրավել զյուղացիական ալեկի լայն մասսաներին, վորոնք կազմակերպված են մեկտրատիվ ընկերություններով. բնդամին՝ տեղական կուսակցական և խորհրդային կազմակերպությունները պետք է ուղադրություն դարձնեն մեկտրատիվ ընկերությունների զարգացման և ամրացման վրա և ամեն կերպ նրանց մեջ կոոպերատիվ հասարակություն ծավալելու վրա:

7. Տեղական խորհրդային ստորին ապարատի շահագրգռությունը բարձրացնելու նպատակով բամբակագործության զարգացման հանդեպ և նրա ակտիվությունը բարձրացնելու նպատակով՝ մանր վոտողման շինարարության և ջրոգտագործման բարելավման գործում, անհրաժեշտ համարել. ա) տեղական ջրային աղմինխտրացիային յենթարկել համապատասխան գործիչներին, միջին-ասիական փորձը տարածելով մյուս բամբակացան շրջանների վրա. բ) տեղական բյուջեյին հանձնել (չըջգործկում) ջրի հասույթի հիմնական մեծ մասը, ընդ սմին՝ այդ միջոցները պետք է ծախսվեն բացառապես ջրոգտագործման կարիքներին վրա. դ) վորոշ դրամական մասնատրում սահմանել հոգուտ տեղական բյուջեյին՝ համապատասխան տվյալ շրջանի բամբակի կազմակերպությունների մթերած բամբակ-հումքի քանակի:

8. Նշելով նոր տարածությունների յուրացման գործի միանգամայն անբավարար վիճակը, չկարգավորված հողաշինարարական աշխատանքները և հողի ու ջրաշինարարության աշխատանքների չհամաձայնեցվածությունը թե՛ նոր վոտողելիք հողերի վրա և թե՛ շահագործող

ծական ձեռնարկումների կատարման հետևանքով յուսանցվելիքների վրա, ԿԿ անհրաժեշտ է համարում հանձնարարել Անդրյերկրկումին, Միջին-Ասիայի Բյուրոյին և Կազակստանի Յերկրկումին մշակել և միջոցներ ձեռք առնել ապահովելու հողաշինարարական և ջրաշինարարական աշխատանքների արագացումը, արագացնելու նոր տարածությունների յուրացումը և նրանց ալեկի ԵՖՖեկտավոր ոգտագործումը, բամբակի հողաշերտի չափերը հասցնելով նոր վոտողվելիք հողերի աճման ընդհանուր տարածության վոչ պակաս քան 50 տոկոսին:

9. Նոր վոտողվելիք հողերի ալեկի արագ և ԵՖՖեկտավոր ոգտագործման նպատակով, ինչպես և միաժամանակ բամբակագործության մեջ սոցիալիստական սեկտորն ամրացնելու նպատակով, նոր վոտողվելիք խոշոր հողային զանդվածներում, վոր ստացվելու յեն առավելապես ջրարաշխման խոշոր աշխատանքների հետևանքով, հողեր հատկացնել առաջին հերթին և նրանց մեծ մասի չափով բամբակի պետական պլանտացիաների և կոլեկտիվ տնտեսությունների համար:

Համկ(բ)Կ ԿԿ անհրաժեշտ է համարում բամբակացան խորհանտեսությունների վոտողված հողերի տարածությունները Միություն մեջ հնգամյակում հասցնել 250 հազար հեկտ. նույն թվում Միջին Ասիայում և Կազակստանում մինչև 200 հազար հեկտ. Անդրկովկասում՝ 50 հազար հեկտար:

10. Համկ(բ) ԿԿԿ ընդունելով, վոր գյուղատնտեսական քաղաքականության ամենակարեւոր խնդիրը բոմբակացան շրջաններում հանդիսանում է բամբակի ջրովի հողերի հնարավոր առավելագույն ոգտագործումը, անբավարար է համարում հնգամյա պլանով նախատեսված վոչ բամբակային կուլտուրաների վերացման չա-

վերը բամբակացան շրջաններում և նրանց փոխարինումը բամբակով:

ԿԿ բացարձակ անթույլատրելի չե համարում բոմբակի համար պիտանի դաշտահողերն ոգտագործել բրնձի, ջուգորու, շաքարի ճակնդեղի և այլ կուլտուրաների համար: Թուրքսիբի մոտակա ավարտումը և հացահատիկային ցանքերի նշանակալից մասի փոխադրման հնափութությունը դեմի հողերի վրա, ապահովում են բամբակի ցանքերի ինտենսիվ ընդարձակումը և հաշիվ մյուս կուլտուրաների:

ԿԿ անհրաժեշտ և համարում՝ բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով հետագայում վոչ-բամբակային կուլտուրաները բամբակով դուրս քելու համար, բամբակագործների հարկային արտոնությունների պահպանումը, բամբակի ցանքերի ջրաբաշխման պերագուսությունը, բամբակագործների հացի մատակարարման օւժեղացումն ամբողջ տարվա ընթացքում, այդ թվում բուսկ լցնելու ժամանակ, նորմալ կերպով նրանց արդյունաբերական աստիճաններ և անասունների համար կեր մատակարարելը:

11. Բամբակագործությունյան դարգացումը, վերականգնվողագործության պրոգրեսիվ ձեւի դարգացում, կոնտրակտացիայի և կոոպերացիան միջոցով ապահովելով չքավորությունյան և միջակների ուղղակի միացումը խորհրդային իշխանությունյան տնտեսական որդանների հետ, դրանով եւ ազատելով նրանց գյուղի շահագործող վերնախաւերի ստրկական կախումից, առաջ և բերում բուրր կուլակային տարրերի աճող դիմադրությունը: Կուլակային այդ ակտիվությունը պետք և իր հերթին հանդիպի տեղերի բոլոր կուսակցական կազմակերպությունների հակադիմադրության: Հակահարված կազմակեր-

պելով կուլակային այդ հարձակմանը, կուսակցական կազմակերպությունները պետք և ընդարձակորեն բացատրեն բամբակագործների չքավոր-միջակային մասաներին բամբակագործությունյան նշանակությունը՝ նրանց տնտեսական և կուլտուրական մակարդակի բարձրացման և կուլակների ու վաշխառուների ստրկությունից ազատվելու գործում: Կուսակցական կազմակերպությունները պետք և կազմակերպեն և գյուղի բոլոր հեղափոխական տարրերին (կոչիններին, գյուղական չքավորներին, կոմյերիտականներին) ներս առնեն բամբակագործությունյան դարգացման և բամբակագործական շրջաններից վոչ-բամբակային կուլտուրաները դուրս մղելու համար մղվող պայքարի մեջ:

12. Յնելով գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորի ուժեղացումը դարգացման ընդհանուր խնդիրներին՝ գյուղացիությունյան չքավոր-միջակային մասսաների կոլեկտիվացումն ամեն կերպ քաջալերելու միջոցով և ուղղորդության առնելով բանվորական ձեռքերի և քարշուժի ընդհանուր պահասությունը բամբակագործական շրջաններում, վորր բամբակագործությունյան արագ աճման հետևանք և, անհրաժեշտ համարել ընթացիկ հնդամյակում բամբակի ցանքերի մեխանիկական մշակությունը հասցնել բոլոր ցանքերի 90 տոկոսին և բամբակի մեքենայար ցանքներ՝ 70 տոկոսին: Այդ նպատակով անհրաժեշտ և, ա) լրիվ չափով ապահովել բամբակագործական շրջանները վոչ պական, քան 15.000 տրակտորով, փորոնցից 2.200 1929-30 տնտեսական տարում. բ) անհապաղ ձեռնարկել մի գործարանի կառուցումը Միջին Ասիայում՝ բամբակի պեյնիֆիկ ինվենտար արտադրելու համար (քամհար մաղեր, կուլտիվատորներ, բկատուներ), կառուցումն

ավարտելով մեկ օտարվա ընթացքում. գ) ասեղծել նորոգության բազա և նորոգող արհեստանոցների ցանց՝ տրակտորների ու ավտոտրանսպորտի նորոգության համար: Միաժամանակ, առանց սպասելու գործարանի շենքի ավարտմանը, այժմեն իսկ հանձնարարել ՅՏԳԽ՝ ամեն միջոց ձեռք առնել բկատուների արտադրություն կազմակերպելու՝ գոյություն ունեցող գյուղատնտեսական գործարաններում:

Հանձնարարել Միջին Ասիայի Բյուրոյին, Անդրյեկրկոմին, Կազակյեկրկոմին՝ արհմիությունների և ԱշխԺԿ հետ միասին ուսումնասիրել գործադուրկներին մեծապես ոգտադորձելու խնդիրը բամբակահավաքի ժամանակ:

13. Անբավարար ճանաչելով բերքբուսությունը բարձրացման ծրագրված չափը, բամբակահավաքի բերքափությունը բամբակացան չրջաններում հնգամյակի վերջերին բարձրացնել 40 տոկոսով, իսկ Անդրկովկասում 70 տոկոսով: Դրա համար անհրաժեշտ է. ա) 100 տոկոսով ապահովել հին հողերի վրա յեղած ցանքերը հանքային պարարտանյութերի մատակարարումով. բ) ուժեղացնել պարարտանյութերի գործարանի կառուցումը Միջին Ասիայում, նաև հանձնարարել ՅՏԳԽ՝ ջննել Անդրկովկասում արհեստական պարարտանյութերի գործարանի կառուցման խնդիրը և շտապ կերպով ձեռնարկել Ակտյուբինսկու Փոսֆորիտային պարարտանյութերի գործարանի կառուցումն այն հաշվով, վար կառուցումն ավարտվի 1930 թվականի վերջերին. գ) միջոցներ ձեռք առնել բամբակի հունդի ավելի բերքատու և ձեռնաու տեսակներն աճեցնելու, սահմանափակելով յերկայնաթել տեսակների արտադրությունն անկվածային արդյունաբերությունն պարարտանյութերի:

հանջի անհրաժեշտ միջոցումով. դ) դաշտի չափով բաշխելով գյուղատնտեսական փորձի գործը բամբակացան չրջաններում, արագացնել փորձի աշխատանքի արդյունքների փոխադրությունը գյուղացիական դաշտերի վրա. ե) ուժեղացնել ագրոնոմիական ոգնությունը բնակչության, ամեն միջոցով ծավալել բամբակադորձ բնակչության լայն խավերի ագրոնոմիական անդրադարձությունը վերացման աշխատանքը, բամբակադորձական արտադրական խորհրդակցություններ կազմակերպելով և բատրակային, չքավորական և միջակային բնակչության միջից լայն գյուղատնտեսական ավտով ստեղծելով. զ) բամբակացան չրջաններում առաջին և յերկրորդ աստիճանի դպրոցների ծրագրի մեջ մտցնել ագրոնոմիական և տեխնիկական դրաժնությունը տարրական հիմունքների պարտադիր դաստիճանը և ծանոթացումը բամբակի մշակության ամենալատաբերագործված տեխնիկայի հետ. է) ցանքերի լիակատար ապահովումը մաքրատեսակ սերմացուների նյութով և աղբոսով և սերմացուները մաքրատեսակներով ժամանակին փոխարինումը պետք է տալ հովվի խորհրդային սերմացուների տնտեսությունների պարգացումով և դեկիտանական սերմնարուծական ընկերությունների գրավումով սերմացուների նյութը բազմացնելու համար. ը) Գլխաբամբակոմն ամեն կերպ պետք է աջակցի և քաջալերի բամբակի հունդերը տեսակավորող և բամբակի չափաքը մեխանիզացիայի յենթաբնույթ մեքենաների հորինվածքի գործը:

14. Բամբակադորձություն գիտական-փորձնական հիմնարկների աշխատանքներն ուժեղացնելու համար (սեւեկցիոն կայան, պարարտացումների կայան, ենթամոլոդիական կայան, բամբակագոման փորձնական

գործարան, մեքենա-փորձնական կայան), Տաշքենդում բամբակադործական, գիտական-հետազոտական ինստիտուտ կազմակերպել, Գլխամբակել, ղեկավարութիւնը:

Ագրոձեռնարկումները զարգացմանը զուգընթաց էլ անհրաժեշտ է համարում արագացնել այն ձևոնարկումների մշակումը, փորոնք շահագրգռում են ղեկխոսութիւններ թե՛ թեղի վորակով և թե՛ բերքատիւթիւյամբ (ցուցահանդեսներ, լաբորատոր օրինակների պարզեցումը պրեմիայով և այլն):

Հանձնարարել անդրկովկասյան, միջինասիական և կազակստանյան կուսակցական, տնտեսական և կուսութաւի կազմակերպութիւններին՝ ի նկատի ունենալով ստորին ագրոպերսոնալի սուր պակասութիւնը, բնթացիկ տարում Միջին Ասիայում, Անդրկովկասում և Կազակստանում միամյա դասընթացներ կազմակերպել ստորին ագրոպերսոնալի նախադասարանութիւն համար փորձառու գյուղացի-ղեկխոսանքներից և բաւականներից, ընդհանուր առումով 1500 մարդուց փոքր պակաս թիւով, նաեւ ագրոնոմիական ամառային դասընթացներ՝ գյուղացիների դաստառունների համար:

15. ՀամԿ(բ)ԿԿԿ անհրաժեշտ է համարում ավելի վճռական միջոցներ ձեռք առնել բամբակադործութիւնը զարգացնելու նոր շրջաններում (Գաղտան, Հյուսիսային Կովկաս) և ծախսելու բամբակադործական փորձերը (Ուկրաինա, Դքիմ, Աստրախան) բամբակի հոնդերի համապատասխան վաղաժամ տեսակների տարածման միջոցով, ցանքերն անրերքիութիւնից ազատազրկութիւն յենթարկելով և ուրիշ արտոնատու ձեռնարկումներով, բամբակի ցանքերի տարածութիւնը նոր շրջաններում հնգամյակի վերջին հասցնելով 200.000 հեկտարի:

16. Բամբակադործութիւն զարգացման և նրա հետամուր շրջանները մուտք գործելու անհրաժեշտ պայմանն է հանդիսանում հաղորդակցութիւն ճանապարհների զարգացումը, յերկաթուղիների կառուցումը, ավտոտրանսպորտի զարգացումը, խճուղիների և հողային ճանապարհների կառուցում և զոյութիւն ունեցող ճանապարհների վիճակի բարելավումը:

Այդ նպատակով անհրաժեշտ է. ա) ավարտել յերկու տարում Չարժուլ-Խիվա-Նոր Ուրգենչ յերկաթուղու կառուցումը. բ) արագացնել միացող ճյուղերի շինարարութիւնը Հարավային Կիւղիզիայում, Յերգանում, Բուխարայում և Սարիարադում (Ագրբէջանում). գ) բացառիկ ուշադրութիւն դարձնել հողաչին ճանապարհների և խճուղիների բարելավման և ավտոտրանսպորտի կազմակերպման վրա՝ հետամուր շրջաններից փոխադրութիւններ կատարելու համար:

17. Բամբակադործութիւն վերելքը և բամբակադործ ընակչութիւն բարեկեցութիւնը պետք է նշանակալից չափով ուժեղացնեն գյուղացիական կուտակումները:

Անհրաժեշտ է ապահովել այդ կուտակումների արտադրական ուղղութիւնը և նրանց առաւելագոյն ներգրավումը հանրայնացված սեկտորի մեջ, գլխաւորապէս փողովման շինարարութիւն մեջ մեկիորդաւի կոպեքացիայի սիստեմի միջոցով:

18. Բամբակադործական շրջաններում չուկաների մատակարարումը Միութիւնից բերված ապրանքներով պետք է անդադարձնել բամբակադործութիւն վերականգնման վերահաս շրջանի առանձնահատկութիւնները: Յերկրամասի պարենի և կերի պահանջները լիովին բաւարարելու հետ միասին, ճանրութիւն

կենտրոնը ներմուծվելիք սպրանքների ընդհանուր մասնաշաղկապ հետզհետե ավելի պետք է տեղափոխվի սպառողական նշանակութիւն ունեցող առարկաներից դեպի արտադրական մատակարարման առարկաները (տրակտորներ, մեքենաներ, գործիքներ, պարարտանյութեր, տուկեր, շինամթերքներ և այլն) :

19. ԽՍՀՄ ինդուստրացման պլանից բխող բամբակադործութեան զարգացման խնդիրներին կատարումն իրագործելի չե միայն գյուղատնտեսութեան վերակառուցման հիման վրա . վերակառուցման, վոր հիմնված լինի սոցիալիստական սեկտորի զգալի ուժեղացման վրա՝ բամբակադործական տնտեսութեան մեջ, խորհտնտեսային և կոլտնտեսային շինարարութեան աճումն ուժեղացնելու, կոոպերացիայի ամրացման և հողաշինարարութեան ու ջրաշինարարութեան ուժեղացման վրա :

Մասնավորապես, առաջադրված խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է . ա) ուժեղացնել գյուղացիական անհատական տնտեսութեաններին արտադրական կոոպերացման պրոցեսները և բամբակի կոոպերացիայի արտադրական դործունեությունը . բ) զարգացնել մեքենատրակտորային կայանների, վարձակալական կետերի ցանցը, վոր կազմակերպել են թե կոոպերացիան և թե պետական որդանները . գ) կարճատե կոնտրակտացիան փոխարինել յերկարատե կոնտրակտացիայով, վորը տեխնիկան և մշակման յեղանակները բարելավելու պայմաններ է պարունակում և նպաստում է կոլտնտեսական շինարարութեան պրոցեսներին արագացմանը :

20. Բամբակադործական տնտեսութեանների վերակառուցման հիմնական աշխատանքը պետք է անցնի

բամբակի կոոպերացիայի միջով, վորն ամբողջութեամբ տիրելով մթերափորման և վաճառահանման ֆունկցիաներին, պետք է վճռապես անցնի իր անդամների արտադրական միավորման և արտադրական սպասարկման, նախադատրաստելով ամբողջ գյուղերի կամ մի քանի գյուղերի անցումը կոլեկտիվ արտադրութեան : Սակայն անհրաժեշտ է նշել՝ չնայելով վոր բամբակադործները կազմակերպորեն ամբողջովին ընդգրկված են բամբակի կոոպերացիան դեռ չափազանց թույլ է : Իր առաջ ծառացած խնդիրները ճշտորեն կատարելու համար՝ կոոպերացիան պետք է մեծ չափով խորացնի իր կազմակերպութեան ամրացման, կոոպերատիվ հասարակայնութեան զարգացման, բուրակներից, չքավորներից և միջակներից ամուր ակտիվ ստեղծելու աշխատանքը, պետք է ավելի ուժեղացրած տեմպով ծավալի չքավորներին ոգնելու աշխատանքը կոլեկտիվ տնտեսութեան անցնելիս :

21. Հնդամյա պլանով նշված գյուղատնտեսութեան սոցիալիստական սեկտորի մեծացումը կի անբավարար է ընդունում : Առաջարկելով հանրայնացված սեկտորի արտադրանքը բամբակադործութեան մեջ հնդամյակի վերջերին հասցնել ընդհանուր արտադրանքի 30 տոկոսին, կի միաժամանակ մատնանշում է, թե անհրաժեշտ է առանձին ուղղործություն զարմնել հոր, տեխնիկապես սարքավորված հողաշինարարական կոլտնտեսութեաններ ստեղծելու վրա :

ՏԱՃԻԿՍՏԱՆՈՒՄ .

22. Յերեկով Տաճիկստանի ԻՍՍՀ բարենայտու զլիմայական և հողային պայմաններից և պետանի ուսուրաների առկայութեանից, վորոնք թույլ են ապիս

Համապատասխան միջոցների ձեռնարկումով բամբակադործության հատկացնել հողային բաժնական խոշոր գանձվածներ, անհրաժեշտ համարել բամբակի ցանքերի տարածությունը, վոր 1928-29 թվականին 61.000 հեկտարի յեր հասել, մեծացնել, հնգամյակի վերջերին հասցնելով 150.000 հեկտարի, նույն թվի մեջ առնելով խորհանոտություններին յենթակա ցանքերը:

